

**ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ  
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ)  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**Ճանապարհային երթևեկության անվտանգության գլոբալ աջակցության դրամաշնորհ  
Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային խորհրդի  
/ՀՀ ՃԵԱԱԽ/ Քարտուղարություն**

Հայաստանի Հանրապետությունը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկից (Համաշխարհային բանկ) ստացել է ճանապարհային երթևեկության անվտանգության գլոբալ աջակցության դրամաշնորհ (Դրամաշնորհ)՝ Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային խորհրդի /ՀՀ ՃԵԱԱԽ/ Քարտուղարության ստեղծմանը և գործունեությանը աջակցելու նպատակով: ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության Տրանսպորտի ԾԻԳ-ը դրամաշնորհի միջոցներով կվարձի անհատ խորհրդատուների հետևյալ թափուր պաշտոնների համար.

1. **Քարտուղարության Բյուջեի պլանավորման և ֆինանսավորման հայթայթման հարցերով մասնագետ (ԲՊՖՀՄ)**

***Աշխատանքների նկարագրությունը***

Քարտուղարության ԲՊՖՀՄ-ը պատասխանատու կլինի Քարտուղարության բյուջեի պլանավորման և ֆինանսական միջոցների կառավարման համար: Աշխատելով Քարտուղարության պետի և անձնակազմի այլ անդամների հետ՝ ԲՊՖՀՄ-ը պատասխանատու կլինի Ռազմավարության և Գործողությունների ծրագրի իրականացման համար կայուն ֆինանսավորման պլանի և տարբեր աղբյուրներից ֆինանսավորում ապահովելու հատուկ առաջարկների մշակման համար:

***Որակավորման պահանջները.***

Ակնկալվում է, որ Քարտուղարության ԲՊՖՀՄ-ը կունենա համապատասխան կրթություն ֆինանսների կամ համապատասխան այլ ոլորտում և առնվազն 3 տարվա մասնագիտական փորձ: Նախապատվությունը կտրվի նրանց, ովքեր կառավարության/դոնոր կազմակերպություններից ֆինանսավորում ստանալու համար բիզնես-ծրագրեր մշակելու մեծ փորձ ունեն: Մասնագիտական անգլերեն լեզվի լավ իմացությունը պարտադիր է:

2. **Քարտուղարության Տվյալները վերլուծության վիճակագրության հարցերով մասնագետ (ՏՎՎՀՄ)**

***Աշխատանքների նկարագրությունը.***

Քարտուղարության ՏՎՎՀՄ-ը հանդես կգա որպես ճանապարհային վթարներին վերաբերող տվյալների համակարգող պետական մարմինների և ճանապարհային երթևեկության անվտանգության հետ առնչվող այլ հաստատությունների միջև: ՏՎՎՀՄ-ը պատասխանատու կլինի վնասվածքների և վթարների վերաբերյալ Քարտուղարության տվյալների բազայի ամենօրյա վարման և ճանապարհային ոստիկանության և տվյալներ ներկայացնող այլ մարմինների հետ համագործակցելու համար: Մասնավորապես, ՏՎՎՀՄ-ը սերտորեն կհամագործակցի ճանապարհային ոստիկանության հետ՝ ապահովելու համար վերջիններիս կողմից վնասվածքներին և վթարներին վերաբերող հավաքագրված տվյալները ամբողջությամբ վերջնական օգտագործողներին փոխանցելու համար:

***Որակավորման պահանջները.***

Ակնկալվում է, որ ՏՎՎՀՄ-ը կունենա համապատասխան կրթություն ճարտարագիտության, ինֆորմացիոն տեխնոլոգիաների, վիճակագրության կամ սոցիոլոգիայի բնագավառում և առնվազն 10 տարվա մասնագիտական փորձ և մասնագիտական կապերի լայն շրջանակ: Անգլերեն լեզվի իմացությունը ցանկալի է:

3. **Քարտուղարության կրթական հարցերով մասնագետ (ԿՀՄ)**

***Աշխատանքների նկարագրությունը.***

Քարտուղարության Կրթական հարցերով զբաղվող մասնագետը սերտորեն կհամագործակցի ՀՀ կրթության և գիտության նախարարության, դպրոցների տնօրենների և ճանապարհային ոստիկանության հետ մշակելու և իրականացնելու ճանապարհային երթևեկության անվտանգության դասընթաց երեխաների համար՝ հիմնվելով ՀՀ կրթության և գիտության նախարարության, ճանապարհային ոստիկանության և ՃԵԱԱԽ ՀԿ-ի կողմից արդեն իսկ ձեռք բերված փորձի վրա: Կրթական հարցերով զբաղվող մասնագետը պատասխանատու կլինի կրթական և հանրության իրազեկվածության քարոզարշավների նախագծման և իրականացման համար, կաջակցի նաև մամուլի և հասարակայնության հետ կապերի մասնագետին պատրաստելու

ճանապարհային երթևեկության անվտանգության քարոզարշավի համար մյուսեր, Քարտուղարության աշխատանքներին օժանդակելու նպատակով, և իրականացնելու ուսումնական դասընթաց մամուլի ներկայացուցիչների համար՝ ճանապարհային անվտանգության ոլորտում առկա խնդիրները հասկանալու նպատակով:

***Որակավորման պահանջները.***

Ակնկալվում է, որ ԿՀՄ-ը կունենա համապատասխան կրթություն և առնվազն 5 տարվա մասնագիտական փորձ: Նա պետք է աշխատած լինի կրթության, առողջապահության կամ համապատասխան այլ բնագավառում և ցանկալի է, որպեսզի ունենա հանրության վերաբերմունքը և վարքագիծը փոխելուն ուղղված հանրության իրազեկվածություն և կրթական քարոզարշավ իրականացնելու փորձ, որը ներառում, բայց չի սահմանափակվում երեխաներին, մեծահասակներին և ոլորտին առնչվող որոշում կայացնող անձանց: Հասարակական աշխատանքներ և քարոզարշավներ իրականացնելու մասին գիտելիքներ ունենալը ցանկալի է: Ուսումնական դասընթաց իրականացնելու փորձը առավելություն կհամարվի: Մասնագիտական անգլերեն լեզվի լավ իմացությունը պարտադիր է:

**4. Քարտուղարության մամուլի և հասարակայնության հետ կապերի մասնագետ (ՄՀԿՄ)**

***Աշխատանքների նկարագրությունը.***

Քարտուղարության ՄՀԿՄ-ը պատասխանատու կլինի զանգվածային լրատվամիջոցների հետ ամենօրյա կապ պահպանելու և ճանապարհային երթևեկության անվտանգության հիմնախնդիրները մշտապես վերջիններիս ուշադրության կենտրոնում պահելու և ճեՍԱԽ բազմալեզու վեբ կայքին (հայերեն և անգլերեն) հետևելու համար՝ թարմացնելով այն և ներկայացնելով ճեՍԱԽ և Քարտուղարության կողմից կատարված աշխատանքները: ՄՀԿՄ-ը կիրականացնի հայկական մամուլի մոնիտորինգ և կպատրաստի ճանապարհային երթևեկության անվտանգության հիմնախնդիրների վերաբերյալ հաշվետվություններ:

***Որակավորման պահանջները.***

Ակնկալվում է, որ ՄՀԿՄ-ը կունենա համապատասխան կրթություն և առնվազն 3 տարվա մասնագիտական փորձ: Նա պետք է աշխատած լինի հասարակայնության հետ կապերի կամ ժուռնալիստիկայի բնագավառում և ունենա հաջող քարոզարշավներ իրականացնելու փորձ: Մասնագիտական անգլերեն լեզվի լավ իմացությունը պարտադիր է:

**5. Քարտուղարության ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ճանապարհաշինության հարցերով մասնագետ (ՃԵԱԱՃՄ)**

***Աշխատանքների նկարագրությունը.***

Քարտուղարության ՃԵԱԱՃՄ-ը հանդես կգա որպես ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ճանապարհաշինության աշխատանքների համակարգող ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման հարցերում ներգրաված պետական մարմինների և այլ հաստատությունների միջև: ՃԵԱԱՃՄ-ը պատասխանատու կլինի ճանապարհային երթևեկության անվտանգության ճանարհաշինության ապահովման միջոցների պլանավորման և կոորդինացման համար: Այս հարցում ՃԵԱԱՃՄ-ը սերտորեն կհամագործակցի ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (մասնավորապես Հայավտոճանի հետ), ՀՀ քաղաքաշինության նախարարության, ճանապարհային ոստիկանության և Երևանի Քաղաքապետարանի և անհրաժեշտության դեպքում կապալառուների և խորհրդատուների հետ (տեղացի և օտարերկրյա)՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ճանապարհաշինության բարելավումներն ապահովելու նպատակով:

***Որակավորման պահանջները.***

Ակնկալվում է, որ ՃԵԱԱՃՄ-ը կունենա համապատասխան կրթություն ճանապարհների շինարարության ոլորտում և առնվազն 3 տարվա մասնագիտական փորձ: Նա պետք է աշխատած լինի ճանապարհների ոլորտում և ցանկալի է, որպեսզի ունենա ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ճանապարհաշինության հարցերում պետական մարմինների, ճանապարհային շինարարություն իրականացնող կապալառուների և/կամ խորհրդատուների հետ աշխատելու փորձ: Մասնագիտական անգլերեն լեզվի լավ իմացությունը պարտադիր է:

Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն դիմում և տեղեկություններ կենսագրական տվյալներ՝ նշելով, որ որակավորված են ծառայություններն իրականացնելու համար (նմանատիպ առաջադրանքներ իրականացնելու փորձ, տվյալներ համապատասխան հմտություններով վերաբերյալ և այլն): Խորհրդատուն կընտրվի «Համաշխարհային Բանկի Փոխառուի կողմից խորհրդատուների

ընտրություն և վարձույթ» ուղեցույցում սահմանված ընթացակարգերի համաձայն (ընթացիկ հրատարակություն): Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով մինչև 2010թ. հուլիսի 26-ը:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն,

«Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ

Տնօրեն պ-րն Ա. Բախտամյանին

ՀՀ, Երևան, 0010, Նալբանդյան 28

Հեռ: (+374-10) 580 523, 545 748, Ֆաքս: (+374-10) 580 523

Էլ.հասցե: [atp@arminco.com](mailto:atp@arminco.com); [gisoyan@transportpiu.am](mailto:gisoyan@transportpiu.am)